

ՈՒՂԵՎՈՐԻ ՏՊԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԵՅՑՐՈՒԹԻՑ ԵՐԵՎԱՆ

1. ՕԴԱՆԱՎԻ ՄԵՋ

 Ար, 1951 թ. հունիսի 25-ի վաղ առավոտյան, հողանդական ընկերության օդանավին մեջ ինձ հատկացված տեղը գրավեցի, մի լայն շունչ առի. որովհետև իմ կատարելիք ուղևորությանը արգելք հարուցանող անհատնում ձգձգումներից ազատվել էի այլևս: Իսկ երբ օդանավը «Խալիֆ» կողմանց օդակայանից (Թիյրութ) թուշք առավ դեպի Թիւրան, զգացի թե աշխարհի ամենաերջանիկ մարդկանցից մեկն էի ես այդ րոպեում: Զէ՞ որ գրանումս ունեի Սովետական Միության բարեխնամ կառուվարության արտոնությունը՝ ուղևորիվելու համար դեպի արտասահմանի հայության դարավոր երազն եղող Սովետական Հայաստան: Զէ՞ որ մեկ քանի օրից երեսն ժամանելիս, ես էլ դառնալու էի հզոր ու անպարտելի Սովետական Միության լի- արժեք քաղաքացին:

Այս զգացմունքները՝ միացած 1946-ից ի վեր երեսնում բնակլող իմ հարազատ զավակներին վերամիանալու ցանկությանը՝ իմ մեջ հարուցել էին երջանկության մի այնպիսի հրդեհ, որի չերմությունից մոխիր էին դառնել՝ անցյալում՝ սրտում ծնունդ առած բոլոր տեսակի երջանկությունները:

— Ի՞նչ մեծ ու զորավոր մագնիս է դա՝ Սովետական երկիրը, որ իրեն է քաշում իր սահմաններից դուրս ապրող միջինավոր մարդկանց սրտերը:

— Անհավասարելի ի՞նչ գեղեցկություն է դա՝ Սովետական ֆրկիրը, որ ասինքնում է գեղեցկությունների սիրահար ամեն աշք ու միտք, ամեն առողջ դատողություն և զգացում, աշխարհի շորս ծագերում:

— Եվ ես ինչքան բախտավոր հայ եմ, որ զնում էի ի՞նչ երազների աշխարհը՝ Սովետա-

կան Հայաստան, որտեղ ազատ էր կյանքը, արոքար էին կառավարության օրենքները, արժեք ուներ մարդ արարածը:

— Կյանքիս վախոնի մոտեցող տարիների ընթացքում ի՞նչ եմ տեսել արտասահմանում բացի հաղածանքից և անարդարությունից: Ոչինչ, բացարձակապես ոչինչ: Քանի՞ քանի՞ հեղ քանդվել է պապենական տունն, շարդվել են իմ սիրելիները: Քանի՞ քանի՞ հեղ ձերբակավել, բանտարկվել, հաւածվել եմ հայ լինելու համար: Քանի՞ քանի՞ հեղ տուն ու բնակություն եմ փոխել սադակեական դիմունագիտության հետևանքով՝ թյուրիայում, Սանչագում, Սիրիայում և Լիբանանում: Ահա արտասահմանում իմ վարած կյանքի տիտոր պատվերը, որը պատկերն է միանգամայն՝ արտասահմանում ապրող յուրաքանչյուր հայի:

Արտասահմանում իմ ապրած երկար տարիների արդյունքը զրոյի հավասար պիտի լիներ, եթե հասներ Հայրենադարձությունը, որի շնորհիվ իմ զավակներն էլ թոթափեցին օտարների լուծը, զարձան սովետական քաղաքացի և վայելում են Սովետական Հայրենիքի բարիքները՝ ստամարով գարձրագույն կրթությունն նրանք ամուսնացել են արդեն, հայր ու մայր եղել են զավակների, կառուցել են սեփական տուն և ունեցել իրենց տնտեսությունը՝ շնորհիվ Սովետական կառավարության հայրախնամ հոգածարության: Բարեհաջող այս արդյունքն ապահովվել է երկու տարվա կարճ ժամանակամիջոցով՝ Սովետական Հայաստանի հողի վրա, մինչդեռ ես, իմ կես դարու արտասահմանյան կյանքի վերջում, չեմ ունեցել զգուիս համրաբու պահելու համար սեփական մի փոքր բնակարան:

Այսպես էի խորհում ես՝ եթք օդանավը Միշերկականի կապուտ զբերի վրա մի քանի պտույտներ կատարելուց հետո, կիբանանի կանաչավետ լեռների, Սիրիայի, Իրաքի և Իրանի գորշագույն անապատների վերևից թոշում էր ժիրուալից աղմուկով:

2. ԵՓՐԱՏ ՈՒ ՏԻԳՐԻՍ

Ես օրհնում էի այն ոռա գիտնականին, որի հանձարեղ գյուտի—ինքնաթիռի—թեփերով, առա ես թաղում էի հողի անծայրածիր տարածությունների վերև՝ առանց զբժվարության, առանց ցամաքի վրա պատահած տաժառնելի ցնցումների, լիքնեային արագությամբ։ Ներքմում, անհում ու ամայի տարածությունների վրա, բնության նկարած տեսարաններից ամենահոգիչն եղավ ինձ համար նախ Եփրատ, ապա Տիգրիս գետերի երկուամբ։

Այդ երկու գետերն ինձ հիշեցրին աշխարհագության և հայ ժողովողի պատմության գրքերը։ Ըստ այդ գրքերի, Եփրատ և Տիգրիս գետերը բխում են Հայկական բարձրավանդակի լեռներից և Շաթ-էլ Արաբում իրար հետ միանալուց հետո թափվում են Պարսկական ծոցը։ Բայց իմ սիրոտ հուզողը՝ մի ուրիշ տփուր հիշատակ էր. այն՝ թե այդ երկու գետերը, 1914—1918-ի մեծ պատերազմի տարիներին, ընկլուզի և հեռավոր

կանաչավետ լեռների, Սիրիայի, Իրաքի և Իրանի գորշագույն անապատների վերևից թոշում էր ժիրուալից աղմուկով։

3. ԵԲԿՈՒ ՋԱՓ, ԵԲԿՈՒ ԿԾԻՒ

Ճովեր էին տարել բարգարուների ձեռքով հոցուտված հազարավոր հայերի դիակները, զո՞՞ անգիտական, ֆրանսիական, ամերիկական և Արևմտյան նվրոպայի մյուս պետությունների գաղտնական եղանակներին և շահերին։

Եվ նորից շնորհապարտության զգացումը թոփշական էր առնում իմ մտքի մեջ հանդիպ ուսամեծ մեծ ազգին և Սովետական Միության՝ այն իրողության համար, որ նրանք ոչ միայն կոտորածից և կորսորդից իրկել էին ուսական հողերով բնակվող հայերին, այլ նաև Հայրենիք, ազատություն և պետական կյանք էին պարզել հայ ժողովրդին։ Եվ հրճվանքով արտասանում էի փոքր ազգերի իսկական և ամեահայնողի պաշտպան ու պրոգրեսիվ մարդկության մեծ առաջնորդ և ուսուցիչ Գեներալիսամբուռ Ստալինի պատմական ու մեծարծեք սա խոսքը։ Թե՝

«Միայն սովետական իշխանության գաղափարը Հայաստանին բերեց խաղաղություն և ազգային վերածննդի հնարավորություն։»

3. ԵԲԿՈՒ ՋԱՓ, ԵԲԿՈՒ ԿԾԻՒ

Թեհրանում, ինքնաթիռից իշնելուց հետո, ինձ շատ զայրացրեց մի երևուլթ. այն՝ թե «Մենզիս» անոնում մի ամերիկացիի, առանց որևէ ձևակերպության հաջողվեց շուստոյ հեռանալ ճանապարհորդների և գույքերի քըննարկության հաստուկ սրահից, մինչդեռ ես՝ ավելի քան երեք ժամ պարտավորվեցի քաշվությել մաքսատան դահլիճներում՝ իմ անձնական հագուստները պարունակող պայուսակների պարզ քննության համար։ Այդ դեպ-

քը փաստ էր, որ Իրանի պաշտոնատարները գենում քծնում էին ամերիկացիների առաջ, իսկ ինձ նման հասարակ ուղևորի հանդիպ ցույց էին տալիս ամստարթեր ու անկարացակամ վերաբերմունք ես կարող էի օրինակ դեպքեր պարահի պաշտոնատների առջև, եթե ինձ շաջակեցի մի հայ երիտասարդ, որի ի գործ դրած եղբայրական զանքերի շնորհիվ պայուսակներա քննարկվեցին և ինձ հանձնըգեցին Յ—Գ ժամկա ձգձգություն հետո։

4. ՄԻ ԳԻՇԵՐ ԹԵՇՐԱՆՈՒՄ

Թեհրանում ոչ մի գործ շունեի անելիք: Ես նմանվում էի մի զաղթող թոշունի, որն իր հանապարհորդության ընթացքում կանգ կառնի մի որևէ ճյուղի վրա, ըստ կարիքի և հարմարության, մի քիչ հանգստանալու նպատակով։ «Խասիր» կոչված հայկական հրուրանոցն եղավ այլ մի գիշերվա հանգստարանն ինձ համար՝ Իրանի մայրաքաղաքում, որը հրապուրից ոչինչ չուներ այն օրը։ Ընդհանապահը, տփուր էլ էր։ Զէ՞ որ հազիվ մի տասնյամկ օր առաջ, նավթարդյունագի-

րության ազգայնացման ի նպաստ կատարված մեծ ցուցի ընթացքում վիրավորվել և սպանվել էին բազմաթիվ աշխատավորներ։

Բալվականին շոգ էր հոգիսի այդ գիշերը։ Այդ պատճառով էլ ես մինչեւ ուզ ժամանակ մնացի հյուպանոցի այգում, որտեղ համեմատագրար տանելիք էր տղա։ Ես, այգու անկյունում տեղափորված, ունեի միայն մի ցանկություն, այն՝ թե առավոտը շուտ հասներ, և ես ճանապարհ ընկնեի գեղի իմ պանծալի հայրնիքը՝ Սովետական Հայաստան։

5. ԳԵՎԻ ԹԱՎՐԻԶ ՈՒ ԶՈՒՖԱՆ ԵՎ ԵԲԿՈՒՄԴ ՔԱՆԱՐԿՈՒՄԸ

«T. C. C.» կոչվում էր տրանսպորտային այն ընկերությունը, որի պատկանող մի ավտոբուս ինձ փոխադրեց Թավրիզ։

Ավտոբուս ինձ հետ ճանապարհորդություն իրանցիները, որոնց հետ թյուրքերն էի խոսում, ասում էին, որ Պարսկաստանի հա-

մարյա բոլոր ճամփաները, թեհրանից մինչև իրանական ջուղիք երկարող ճանապարհի նման, փոսերի շարան են ու տաժանելի բան է ցամփային ճանապարհորդությունն իրանում:

Հովկիսի 29-ի առավոտյան, Թավորիդից ինձ փոխադրող բեռնատար ավտոն կանգ առաջ իրանական ջուղիքայոմ, որտեղի զինվորական իշխանությունը բարեկիրթ վերաբերմունքով կատարեց անցագործային ձևակերպությունները: Դժբախտաբար, այդպես չեղավ մաքսատնում:

6. ՀԱՆՉԱՄԱՆ ԶԵՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Իրանական հողի վրա պաշտոնական բոլոր ձևականությունների ավարտումից հետո, ինձ Սովետական իշխանությանը հանձնելու արարողությունը՝ նմանվում էր մի կատարյալ ծիսակատարության: Առջևից քայլով էին պարսիկ երկու սպաներ: Նրանց հետևում էին սլիմավոր երկու զինվորներ, իսկ ամենից հետո դանդաղ դանդաղ առաջանում էր ինձ փոխադրող ավտոն:

Խորհրդավոր լուսավոր էր տիրուա Արաքսի մեծ կամրջի վրա: Սիրոս տրոփուա էր ուրախությունից՝ քանի մոտենում էի Սովետական սահմանին: Զի զգում 2000 կիլոմետր ճանապարհորդության պատճառած հոգնածությունը: Զի՞ որ հինգ տարիների կարութը պիտի վերացնել շուտով՝ միանալով իմ ճարազատ ընտանիքին, որը բազմացել էր նոր հարսով ու փեսայով և նորածին երեխաներով: Զի՞ որ արտասահմանի հայության գիշեր ցերեկ երազած Սովետական Հայաս-

Հակառակ նրան, որ իմ գույքերը քննարկվել էին թեհրանի օդակայանի հատուկ մաքսատնում, իրանական ջուղիքի երիտասարդ պաշտոնյան երկրորդ անգամ մանրազննորեն քննարկեց իմ պայուսակները, դուրս թափելով նրանց պարունակած անձնական հագուստեղենները: Ես, հոգնությունից ավելի, ափսոսում էի իզուր անցնող ժամանակի վրա: Այնքան էի շտաբում վայրիկյան առաջ հանձնվել Արաքսի մյուս ափուամ գորոված գորովածով մոր նման գրկարաց ինձ սպասող Հայրենիքիս:

6. ՀԱՆՉԱՄԱՆ ԶԵՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

տանի անուշ բուրմունքը բարձրանուամ էր վեր՝ Արաքսի կապտավլուն ջրերից:

Արաքսի վրա, բարձրադիր ու ձիգ կամրջի կենտրոնական մասում զետեղված սահմանային կամարի մոտ կանգ առան երկու պարսիկ սպաններն ու ցուց տալուց հետո մինչինավարին ազդարարեցին կանգ առնել: Ապա, տրված ազդանշանի վրա, մեքենավարը սկսեց հնչեցել կլաքսոնը:

Շատ շանցած, կամրջի սովետապատկան ծայրամասից երևացին սովետական երկու զինվորականների հաղթ սիլվետները:

Որքան մոտենում էին նրանք, այնքան մեծանում էր հուզումն իմ սրտում: Նրանց մեջ ես տեսնում էի մեծությունը Սովետական Միության, որը տիեզերածավալ իր զբաղմունքների շարքում զրադվել էր նաև ինձով և հայրածար արտոնել, որ ես վերամիանամ Սովետական Հայաստան ներգաղթած իմ զավակներին:

7. ՄԻ ՊԱՐԶ ՀԱՄԵՄԱՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Այդ պահին մտաբերում էի Չոլաքյանի երեխաներին, որոնք ամերիկյան այսպես կոչված «արդարադատ» դատարանի վճռով բաժանվեցին իրենց Հայաստան ներգաղթող ծնողներից և վար դրվեցին Ամերիկայում՝ կորչելու համար անջուշ: Ամերիկան զատում, բաժանում է հոր ու զավակներին, իսկ Սովետական Միությունը միացնում է դեպքերի բերմամբ իրարից բաժանված սրտահատորներին: Ամերիկան ծիծաղում է իրարից բաժանված համարակառնությունը և առաջանական պարագաների տառապանքների վրա: ընդհակառակությունը, Սովետական Միություն ուրախանում է տեսնելով բաժանված հարազատների վերամիացումը: Ամերիկան բզիկ-բզիկ է անում արտասահմանի հայերին՝ սրանցիցին՝ սոցիալիստական» մշակությը:

Վայ արտասահմանի այն հայերին, որում կամրջի սրանքի նրանք հայվեն, մաշվեն և մահանան ամերիկյան ֆարբերիկաների խուզ ու խոնավ անկյուններում, մինչեւ Սովետական Միությունը պարազան առ կարավան փոխադրում է արտասահմանի հայերին Սովետական Հայաստան, որպես նրանք կառուցեն իրենց «ձեռով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական» մշակությը:

Վայ արտասահմանի այն հայերին, որոնք համար են ձևանում՝ շտեսնելու համար այս համրահայտ ճշմարտությունը և աղմկում են հարազարակը՝ ամերիկյան վատասեռից ուղեմովարադիյայից ճամփուած թմրուկով, թեկուալ արտասահմանում ոչ մի հայ ցանկանա լսել դրա ձայնը:

8. ՀԱՆՁՆՈՒՄ ԵՎ ՀԱՆՁՆԱՌՈՒՄ

Սահմանադրին կամարի տարկ սովետական սպաների և պարսիկ սպաների խոսակցությունը տևեց շատ կարճ: Պարսիկ սպաներից մեկն իմ պասպորտն երկարեց Սովետական սպաներին: Երբ վիզայի քննությունն ավարտվեց, ինձ հրաման տրվեց ավտոյիշ իշնել ու ներս մտնել սովետական սահմանից՝ իմ պարտասակների հետ:

Միրտս ոռոգում էր հպարտությունից ու երջանկությունից այն աստիճան, որ չէի

նկատել պարսիկ սպաներից և զինվորներից բացի, անգամ սովետական երկրորդ սպասիչնանալը, Մնացել էի մեծ-մեջնակ սովետական բարձրասարհնեան սպասիչ հետ դեմքանդիման, նա՝ կամրջի աջ եղրում, ես՝ ձախում: Նա՝ ինձ նայում էր իրեն որպես նորածին մի երեխա, որը զուրկ էր մտածումներն արտահայտելու կարողությունից:

9. «ՄԱՅՐ Ա.ԲԱ.ՔՍԻ Ա.ՓԵՐՈՎՎ»

Հոգիսյան կիզիչ արևի շոգից քրտինքն առատորեն հոսում էր իմ ճակատից: Հոգերան սպան տեսնելով իմ վիճակը, նշան արեց որ առաստանեմ իրեն մոտ՝ սահմանադրին կամարի մեծ այոնի շվագում: Սպայի այս հոգատար վերաբերմունքը սիրոս լցրեց անհուն բերկանքով, որովհետև այդ հոգատարությունն անհերքելի փաստն էր սովետական մարդկանց եղբայրասիրության, որին ի տես փոքր տարիքից ի վեր ուսւ մեծ ժողովրդի հանգեց իմ ունեցած սերը մեծացավ, լինացավ, անհունացավ ու թիւրես, այդ համոզումն առավել ևս արմատավորելու համար, ոռակերենով ինչ որ բան խոսեց սպան՝ ցուց տալով Արաքսի ջրերը:

Աշքերս հածում էին «Մայր Արաքսի ափերով»: Սպայի ինձ ցուց տվածը փոքրիկ կարմրախայտ ձկներ էին, որոնք մերթ ցուցաբում էին իրենց արծաթափայլ փոքրեր, մերթ խորասուզվում էին ջրերի տակ՝ պըզակներ գոյացնելով գետի մակերեսում:

Դա, զա, — պատասխանեցի սպային: Ավտոս, որ իմ ոռակերենի ամբողջ պաշարը սպասում էր այդ մեկ բառով: Մտքովս անհծում էի իմ ոռակերեն լեզվի տպիտության պատճառներն ու պատասխանատուներին: Ես անհծում էի արտասահմանյան տագնապալի պայմանները, որոնք միշոց չէին թողել սո-

փոքրելու հայ ժողովրդի անկեղծ բարեկամն ու իսկամբան պաշտպանն եղող ուսւ ժողովրդի լիզուն:

Այս տրտում մտածումները, սպային, շուտով փոխվեցին ուրախության, երբ աշխեռանորից հառավեցին Արաքսի ջրերին: Տեսնում էի, որ Արաքսը՝ «ագավոր» չէր, ոչ էլ «պրդտոր» էին նրա ջրերը կամ «արցոնք ցայտում» նրա ասեգ ու հպարտ աշխերից», ինչպես երգել էր հայ բանաստեղծ Ռ. Պատկանյանը: Ընդհականակը, այժմ՝ Արաքսը, մի գեղեցիկ ու սեաչյա հայ աղջկա նման մահակավան պար էր բանել ձկանց հետո: Այժմ նրա ջրերը, մի դաշնամրութ երգի նման հեզասահ հոսում էին գեղի ծով, տանելով «հին հին դարուց հիշատակ» բարձր լիների բարելը՝ գեղի հեռավոր կասպյան ծովը:

Իմ ուրախությունն ավելի մեծացավ մանավաճութ, երբ տրանսպորտային մի ավտոհասավ մեզ մոտ և վառվուն մի երիտասարդ ավտոյի մեջ տեղավորեց ինձ և իմ պայտասակները: Մի քանի րոպե հետո ավտոն կանգ առավ Սովետական Զովքայում մի լայնանիստ և գեղակառուց շենքի առջև: Ես ոչինչ շվճարեցի այս փոխադրության համար Սա ևս փաստ էր սովետական հոգատարության:

10. «ԹԻՐԱՅՐ ԵՆՔ ՄԵՆՔ»

Երբ օրինական ձևականություններն ավարտվեցին, ժամը կեսօրից անց 4-ն էր եղել: «Ինտուրիստ» հյուրանոցի աշխատավորներից մեկը, աղքաբեշանցի մի երիտասարդ Ալի անունով ինձ առաջարկեց ուստորանգնալ և սեղանակից լինել իրեն: Վարանեցի: ոչ մի կոպեկ չունեի գրաբանում: Նա հասկացավ: Թևս մտավ մտերմորեն:

— Ոչինչ. մենք յոլպաշներ ենք, ասաց նա և ինձ տարակ հարակից ուստորանը, որտեղ Ալի յոլպաշն ու ես ճաշակեցինք ուսական նշանավոր բորշչն ու խմեցինք ընտիր օդին:

Ալիի այս եղբայրական վերաբերմունքը կրկնակի օրինակ էր սովետական գաստիարակության բարձրության: Ինձ անծանոթ մի երիտասարդ, ինձ համար անծանոթ մի երկրուի հեռավոր մի անկունում, առանց ճանաշելու իմ պայմանները, հյուրասիրում էր ինձ (ոչ մի ոտեւիք չէի վերցրել իրանից):

— Ալի յոլպաշ, շնորհակալ եմ, որ ինձ «եղբայր» ես անվանում: Արի, մի լավություն ևս արա և ինձ այսօր իսկ նրան ուղարկիր ավտոյով, ասեցի ես նրան, երբ ուստորանից վերաբարձանք «Ինտուրիստ» հյուրանոցը:

— Հասկանում եմ, լավ եմ հասկանում: Դու ուզում ես մի ըոպե առաջ հասնել Սրբան, առնել քո կարոտն ու իրականացած տեսնել տարիների քո երազը: Ես ամեն շանք կթափեմ իրականացնելու քո ցանկությունը, — պատասխանեց Ալի յոլդաշը և կայծակի արագությամբ դուքս թուավ հյուրանոցից:

Կես ժամ հետո նա վերադարձավ ինձ մոտ մի երիտասարդի հետ:

— Լիբր, Ալավերդի, այս մեր ընկերը (ինձ ցուց տալով) եկել է արտասահմանից և գնալու է Երևան, նա ցանկանում է հենց հիմքի ճանապարհ ընկնել և այսօր իսկ միա-

նալ իր ընտանիքին, որի կարոտով, տեսնո՞ւմ ես, սպիտակել են նրա մազերը: Կտանե՞ս, պայմանով, որ ճանապարհավարձը ստանաս Երևանում:

Ալավերդի՝ կարճահասակ, մի քիչ շաղ, շեկ մազերով մի հայ երիտասարդ մեքենավար, վերից վար զննեց ինձ և պատասխանեց:

— Ո՞նց թե շեմ տանի. սիրով կտանեմ: Թե որ ճանապարհում մի տեղը խախտվի իմ «Մոսկվիշ»-ի, թեմք կսարքեմ, էլի կտանեմ մեր հայրիկին ու հենց էս գիշեր նրան կհանձնեմ իր զավակներին, — կատակեց Ալավերդին:

11. ԳԵՂԻ ԵՐԵՎԱՆ

Միայն սովորական մարդկանց հատուկ արագությամբ պայուսակներս և ինձ տեղավորելուց հետո, Ալավերդին թափ տվեց «Մոսկվիշ»-ին, որ արծվաթոիլ սլանում էր աև օձի նման գալարուն ասֆալտապատ ճանապարհի վրա:

Ես չէի խոսում, այլ նայում էի հիացկոտ հայրենի հարուստ բնության: Հիշում էի Արաքսի մյուս ափի՝ իրանական հողի անմշակ, խոսքան, ամուկ վիճակը, իսկ զվարդանում, ուրախանում, հպարտանում

էի դիտելով ու տեսնելով մշակված, արգասաբեր, բարզավաճ վիճակը Զովֆա—Երևան ասփալտապատ լայն ճանապարհի երկու կողմերում տարածված արտերի ու դաշտերի, որոնք սովորական ստեղծագործ և շինարար մարդկանց հուժկու ձեռքերի գիտակից աշխատանքով վերածվել էին ծիծաղուն գյուղերի, կանաչավետ պուրակների, մրգառատ պարտեզների և սովորաշատ այգիների:

12. ԱՐԱՐԱ-ՏԸ, ԱՐԱՐԱ-ՏԸ

— Գրավ եմ դնում, որ հորիզոնից վեր բարձրացող այդ վեհապանծ գագաթը՝ մեծ Արարատն է, — ասեցի ես մեքենավարին՝ թող տալով իմ խորհրդաժությունների կծիկը:

— Իրավունք ունես, հավաստեց Ալավերդին:

Մայրամուտին մոտեցող արմեն նվազուն

ճաճանչների տակ պսպղում էր ձյունագագաթ Մեծ Արարատը, իսկ նրա աջում կոնածե ցցվում էր Փոքր Արարատը: Քանի առաջանում էր մեր ավտոն, այնքան բարձրանում էին նրանք: Ափսոս, որ օրը մինում էր և հորիզոնը՝ խավարում, երբ մեր ավտոն նախիշեանի հողամասից մոռավ Սովորական Հայաստանի սահմանից ներս:

13. ՓԱՌՔ ՔԵԶ,

ԵՐԿԻՐ ՀԱՅՐԵՆԻ

Վերջալուսը մազվում էր Արաքսայան դաշտի վրա, մինչդեռ ես սրտում զգում էի մի նոր կյանքի եռալը: Արտասահմանում իմ անցկացրած ավելի քան հիսուն տարու երազների և Սովորական Հայաստանի բարդավաճման ինպաստ իմ ցանկությունների իրականացումն էի տեսնում էլեկտրական լամպերում, որոնք մկնել էին լուսարձակ փայլել ասփալտապատ լայն ճանապարհի երկայնքում, հուշկապարիկների նման շքեղորեն պահապարդելով հայկական գյուղերը:

Ես իմ նոր կյանքի հեռանկարով այնքան էի խանդակաված, որ Արարատ, Արտաշատ, Դվին և այլ գյուղերի լուսողող ծառուղիների միջով անցնելիս, երգում էի ինքնաբերարար Փառք քեզ, միշտ փառք, հերոսական Հայաստան,

Հանճարեղ դու ճարտարագործ, զինարար, ժողովրդոց սովոր դաշինքով ստալինյան Դու ծաղկում ես և կերտում լույս ապագագ:

(Հարունակելի)